

2. Հողային սահմաններու պաշտպանութիւնն ու բնագործակման ջանքը .

3. Պատերազմը նկատուած հարստութեան աղբիւր .

4. Հերոսական փառքի սէրը . յաղթականի մեծութեան վայելքը . անկախութեան ժառանգական բնազդը . ուրիշ տարբեր կեանքով ապրելու անսովորութիւնը :

Մենք թէ ուզգակի և թէ անուզգակի խօսեր ու դեռ կը խօսինք մեր առաջ բերած այս հիմնական պատճառներու վրայ . բայց կայ և մի այլ պատճառ , որուն արժէքը այնչափ նշանակալից է , որ աւելնալով միւսներուն վրայ կը լինի

5 րդ՝ Կանանց հարցը :

Քիւրդերու մէջ կանանց հարցը սեռային բնազդական հակումներէ , գեղադիտական հաճոյքներէ զատ՝ կը կազմէ նաև ցեղային պետական յօրինուածին մէկ մասը . Յեղապետութիւնը կանգուն պահող ու կործանող սիրներէն մէկն ալ մի այլ ցեղի հետ եղած ամուսնական խնամիրութիւնն է :

Շատ քիչ կը պատահի որ ազնուական Քրդուհին գեղեցիկ լինի . այդ պարագային ցեղապետը կամ ժառանգները անոր արժանանալու համար անհրաժեշտ կը դառնայ ոչ միայն լինել գեղեցիկ , այլև տէր դիրքի , հարստութեան , անուան , որպէս զի կարող լինեն դիմադրելու ուրիշ զօրեղներու մրցմանը . հետեւաբար՝ և թշնամութեանն ու յարձակմանը :

Քիչ չէ պատահեր որ քիւրդ գեղուհին ամուսնութեան երթալով՝ չը փոխէ ցեղապետական իշխանութեան դիրքը՝ բարձրացնելով կամ դաւաճանութեամբ անկումի տանելով . որովհետև կնոջական իր սովորական իրաւունքներէն զատ՝ ունի և քաղաքական՝ սիկնութեան իրաւունք . ինչքան արժէ Տէրը , նոյնքան և արժէ Տիկինը , թէ այդ և թէ ուրիշ ցեղերու համար :

Գեղանի քրդուհին կ'ապրի սովորաբար փառքի վիպական երազներով , ու շատ անգամ ցեղապետութեանց այս ու այն տիկնութեան մէջ մնալէ յետոյ , կ'երևակայէ միշտ , շուտով անցնել գեղեցիկներէն գեղեցկի , հզօրներէն հզօրի ձեռքը , որ